

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Երևան
2014

ՆԱԽԱԲԱՆ

Մարդկային կապիտալը Հայաստանի մրցունակության գլխավոր գործոններից մեկն է: Հանրակրթությունը նման արդյունավետ և մրցունակ կապիտալ ստեղծելու հիմքն ու նախապայմանն է:

Այսօր Հայաստանում ուսուցչի մասնագիտությունը բախվում է մի շարք մարտահրավերների՝ կապված աշխատանքի ընդունման, մասնագիտական զարգացման և աշխատավարձերի հետ, ինչն էապես ազդում է դպրոցներում դասավանդման որակի վրա և ընդհանուր առմամբ նվազեցնում այդ մասնագիտության գրավչությունը: Այս ամենը բացասական ազդեցություն է ունենում դպրոցական կրթության վրա: Դպրոցական կրթությունը որակապես նոր մակարդակի վրա բարձրացնելու համար անհրաժեշտ է անհապաղ կատարել կանխարգելիչ և նպատակային միջամտություն: Այս համատեքստում որոշիչ նշանակություն ունեն ուսուցիչների՝ որպես ազգային ռեսուրսի, արդյունավետ օգտագործումը և դասավանդման, ինչպես նաև ուսումնական ծրագրերի որակի բարելավումը:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ դպրոցական համակարգի բարելավումը համընդհանուր խնդիր է, որի լուծումը պահանջում է համակողմանի միջամտություն: Ուսուցիչների գնահատման պատշաճ համակարգ, մասնագիտական աճի լայն հնարավորություններ, մրցունակ աշխատավարձեր և հասարակության մեջ ուսուցչի դերի բարձրացում. սրանք են այն գործոնները, որոնք առանցքային կարող են դառնալ Հայաստանի դպրոցական կրթության ողջ համակարգի կատարելագործման համար:

Այս փաստաթուղթը ներկայացնում է Կրթության գերազանցության ազգային ծրագրի (ԿԳԱԾ) հայեցակարգը և իրագործման պլանը, որը պետական մակարդակի նախաձեռնություն է և կոչված է նպաստելու դպրոցական կրթության համակարգային բարեփոխումների իրագործմանը: «Արարատյան բակալավրիատ» (ԱԲ) համակարգը՝ որպես միջազգայնորեն ճանաչված կրթական հարթակ, կլինի ծրագրի իրականացման հիմնական գործիքը:

Ծրագրի շրջանակում լավագույն արդյունքներով ուսուցիչները կհավաստագրվեն երկու մակարդակով, որոնցով կգնահատվի նրանց գործունեությունը՝ նպաստելով նրանց մասնագիտական աճին և դասավանդման լավագույն փորձի տարածմանը Հայաստանի հանրակրթության համակարգում:

Ակնկալվում է, որ Կրթության գերազանցության ազգային ծրագիրն առանցքային դեր կունենա կրթված, արհեստավարժ և բարձր բարոյականությամբ օժտված երիտասարդ սերունդ դաստիարակելու գործում:

ՈՒՍՈՒՑՉԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՌԿԱ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Ուսուցչի մասնագիտությունը Հայաստանում բազմաթիվ խնդիրների է հանդիպում, ինչը նվազեցնում է մասնագիտության ընդհանուր գրավչությունը: Երեք գլխավոր գործոնները, որոնք բացասաբար են ազդում ուսուցիչների գործունեության արդյունքների վրա, հետևյալն են.

- ուսուցիչների աշխատանքի ընդունում.
- մասնագիտական աճ.
- աշխատավարձ:

Ուսուցիչների աշխատանքի ընդունման ներկայիս համակարգը չի ապահովում ուսուցիչների մասնագիտական պատշաճ որակավորում:

Ուսուցչի որակավորում և աշխատանք ձեռք բերելու չափորոշիչները սահմանված են ՀՀ «Հանրակրթության մասին» օրենքով, որի համաձայն՝ ուսուցչի պաշտոնի համար նվազագույն պահանջը մանկավարժության բակալավրի որակավորման աստիճանն է:

Առկա խնդիրները

Ուսուցիչների՝ աշխատանքի ընդունման գործընթացը և մասնագիտական աճի համակարգը ունեն նկատելի թերություններ, որոնք վտանգում են դրանց անաչառությունը և արդյունավետությունը: Համակարգված մոտեցումների պակասը և վերահսկման ոչ լիարժեք մեխանիզմները համապարփակ ձևով չեն ապահովում ուսուցիչների մասնագիտական գիտելիքները և մանկավարժական չափորոշիչներին համապատասխանությունը:

- Դպրոցի տնօրենը լայն իրավասություններ ունի աշխատանքի ընդունման հանձնաժողովի անդամների նշանակման, թափուր պաշտոնի թեկնածուների գիտելիքների ստուգման և նրանց ընտրության վերաբերյալ որոշումներ կայացնելու գործում:
- Չեն ստուգվում կամ թերի են ստուգվում թեկնածուների մանկավարժական հմտություններն ու առարկայական գիտելիքները, ինչպես նաև այդ հմտությունների ու գիտելիքների համապատասխանությունը միջազգային լավագույն փորձին: Այս հանգամանքը սահմանափակում է մանկավարժական հմտություններով օժտված և առարկայական խոր գիտելիքներով զինված շնորհալի մասնագետների մուտքը դպրոց:

Համապատասխան մեխանիզմների պակասը խոչընդոտում է ուսուցիչների՝ մանկավարժական միջազգային լավագույն փորձին համահունչ մասնագիտական աճի հնարավորությունը:

ՀՀ «Հանրակրթության մասին» օրենքը սահմանում է ուսուցիչների մասնագիտական զարգացման երեք հիմնական միջոց՝

- վերապատրաստում,
- ատեստավորում,
- որակավորման տարակարգի շնորհում:

Ատեստավորման և որակավորման տարակարգի շնորհման ներկայիս համակարգը Հայաստանում ներդրվել է 2010 թվականին:

Վերապատրաստում

Ուսուցիչների վերապատրաստումն իրականացնում են ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից երաշխավորված մի շարք կազմակերպություններ: Վերապատրաստումը ֆինանսավորվում է պետական բյուջեից և այլ միջոցներից, օրինակ՝ միջազգային դրամաշնորհային ծրագրերից: Վերապատրաստումը պարտադիր է ատեստավորում անցնելու և մասնագիտական շարունակական աճի համար: Ուսուցիչները պետք է 5 տարին մեկ պարտադիր վերապատրաստում անցնեն ատեստավորման գործընթացին մասնակցելու համար:

Ատեստավորում

Ուսուցիչների ատեստավորումն իրականացվում է տեղական ինքնակառավարման մարմինների և ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից կազմված հանձնաժողովների միջոցով՝ դպրոցի տնօրենի կողմից ներկայացված ուսուցիչների գնահատման համար: Պարբերական (5 տարին մեկ անգամ) ատեստավորումը պարտադիր է դպրոցում աշխատանքը շարունակելու համար: Ատեստավորումը կատարվում է ուսուցչի ստացած կրեդիտների հիման վրա, որոնք գոյանում են հետևյալից.

- վերապատրաստման դասընթացի ավարտում.
- տեղեկանք-երաշխավորագիր դպրոցի, և այլ շահառուների կողմից.
- անհատական մասնագիտական արդյունքների ամփոփում:

Ատեստավորման արդյունքների հիման վրա ուսուցիչը կամ շարունակում է դասավանդել դպրոցում, կամ հեռացվում: 2012 թվականի տվյալներով՝ Հայաստանի ուսուցիչների մեկ երրորդն ատեստավորվել է:

Որակավորման տարակարգի շնորհում

Որակավորման տարակարգը (քառաստիճան համակարգ) շնորհվում է հատուկ այդ նպատակով կազմավորված հանրապետական հանձնաժողովի կողմից՝ ելնելով ուսուցչի գիտելիքներից, հմտություններից և կարողություններից:

Ուսուցիչը պաշտոնական փաստաթղթերի հետ միասին ներկայացնում է իր մասնագիտական վարպետության մասին դպրոցի տնօրենից տրված տեղեկանք, որն անհրաժեշտության դեպքում կարող է հավաստվել ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային տեսչության կողմից: Որպես խրախուսում ուսուցչի աշխատավարձը բարձրանում է 10-50% չափով՝ կախված տարակարգի աստիճանից: 2012-ի տվյալներով՝ ուսուցիչների շուրջ 1.8%-ը ստացել է տարակարգի առաջին (ամենացածր) աստիճան:

Առկա խնդիրները

Հանրակրթության ներկայիս համակարգը չունի համապարփակ մեխանիզմներ ուսուցչի վերապատրաստման արդյունավետությունը շարունակական դիտարկման և գնահատման միջոցով ապահովելու համար.

- Առկա է ուսուցիչների ատեստավորումը և որակավորման տարակարգի շնորհումը հավաստող անկողմնակալ մեխանիզմների որոշակի պակաս: Քանի որ ատեստավորման նպատակով գնահատման գործընթացը հաճախ միայն

ձևական բնույթ է կրում, ուստի խիստ հազվադեպ են ուսուցիչներին աշխատանքից ազատելու դեպքերը. հանգամանք, որը վտանգում է վերապատրաստման մեխանիզմի արդյունավետությունը:

- Մասնագիտական աճի մեխանիզմները և չափորոշիչները չափազանց սերտ կապված են տեղական դասագրքերի հետ և չեն արտացոլում համաշխարհային լավագույն փորձը: Որակավորումը չի ենթադրում միջազգային քննություն հանձնելու անհրաժեշտություն:
- Որակավորման տարակարգի շնորհիվ ուսուցչից չի պահանջում ցուցադրել բարձրակարգ գործառնություններին և նոր պարտականություններին հատուկ ունակություններ:
- 10-50% աշխատավարձի աճը համեմատաբար աննշան ազդեցություն ունի բազային աշխատավարձի ցածր լինելու պատճառով: Սա սահմանափակում է ֆինանսական խթանները որակավորման բարձրացման համար:

Այս համատեքստում «McKinsey & Company»-ի 2010-ին իրականացրած հետազոտությունը Հայաստանում ուսուցիչների մասնագիտական աճին միտված գործողությունները գնահատում է «բավարար», սակայն՝ ցածր արդյունավետությամբ: Հետազոտության համաձայն՝ Հայաստանում գոյություն ունեցող գերազանց դպրոցական համակարգերը, ուսուցչի մասնագիտական աճի տեսանկյունից, ունեն հետևյալ միտումները.

1. ուսուցիչների մասնագիտական զարգացման կենտրոնացված պետական միջոցառումների փոխարեն համագործակցային գործընթացի կիրառում.
2. անցում ուսումնական դասավանդման ընդունված (ստանդարտ) մեթոդներից անհատական գործիքների և փորձարարական մոտեցումների:

Հայաստանում ուսուցիչների ցածր աշխատավարձը խոչընդոտում է մարդկային լավագույն կապիտալի մուտքը ուսուցչության ոլորտ և չի շահադրդում գործող ուսուցիչներին՝ ձգտելու կատարելագործման:

Հայաստանի հանրակրթության ներկայիս թերությունները, որոշ չափով, կարող են պայմանավորված լինել ուսուցիչների ցածր աշխատավարձով: Սա հանգեցնում է շարունակական արատավոր շղթայի, երբ ցածր վարձատրվող ուսուցիչները հաճախ թերի են աշխատում, իսկ առաջխաղացման և մասնագիտական աճի ներկայիս համակարգը չի խթանում, որպեսզի ուսուցիչները ձգտեն կատարելագործման:

2012-2013 ուս. տարում Հայաստանում ուսուցիչների միջին համախառն փաստացի աշխատավարձը կազմել է մոտ 185 ԱՄՆ դոլար (մաքուր աշխատավարձը՝ մոտ 140 ԱՄՆ դոլար)¹: Հայաստանում ուսուցչի փաստացի աշխատավարձը հաճախ ցածր է նույնիսկ այն աշխատանքների վարձատրությունից, որոնք մասնագիտական ոչ մի որակավորում չեն պահանջում: Ուսուցիչների աշխատավարձերի, ինչպես նաև ուսուցիչների աշխատավարձի և տնտեսության մեջ միջին աշխատավարձի հարաբերակցության միջազգային համադրումը ցույց է տալիս, որ Հայաստանը հետ է մնում կենտրոնական եվրոպայի, Բալկանների և ԱՊՀ մի շարք երկրներից:

¹ Աղբյուր՝ Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն:

| <p>Պետական հանրակրթական դպրոցի ուսուցչի փաստացի աշխատավարձի հարաբերակցությունը տնտեսությունում միջին աշխատավարձին, 2011</p> | <p>Պետական հանրակրթական դպրոցի ուսուցչի փաստացի միջին աշխատավարձը, ամսական համախառն, ԱՄՆ դոլար, 2011</p> | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|--|--|-------------------|---------|------|-----------|-----|----------|------|----------|------|-------|------|--------|------|----------|------|---------|------|-----------|------|---------|------|----------|------|-----------------|-------------|---|-------|------------------------------|----------|-------|--------|-------|-----------|-------|---------|-------|----------|-------|----------|-------|-------|-------|-----------|-------|----------|-----|---------|-----|---------|-----|----------|-----|
| <table border="1"> <thead> <tr> <th>Պաշտոն</th> <th>Հարաբերակցություն</th> </tr> </thead> <tbody> <tr><td>Ավստրիա</td><td>1.42</td></tr> <tr><td>Ֆինլանդիա</td><td>1.2</td></tr> <tr><td>Նորվեգիա</td><td>0.96</td></tr> <tr><td>Սլովենիա</td><td>0.92</td></tr> <tr><td>Չեխիա</td><td>0.88</td></tr> <tr><td>Շվեդիա</td><td>0.86</td></tr> <tr><td>Խորվաթիա</td><td>0.85</td></tr> <tr><td>Մոլդովա</td><td>0.84</td></tr> <tr><td>Հունգարիա</td><td>0.83</td></tr> <tr><td>Էստոնիա</td><td>0.71</td></tr> <tr><td>Սլովակիա</td><td>0.71</td></tr> <tr><td>Հայաստան</td><td>0.61</td></tr> </tbody> </table> | Պաշտոն | Հարաբերակցություն | Ավստրիա | 1.42 | Ֆինլանդիա | 1.2 | Նորվեգիա | 0.96 | Սլովենիա | 0.92 | Չեխիա | 0.88 | Շվեդիա | 0.86 | Խորվաթիա | 0.85 | Մոլդովա | 0.84 | Հունգարիա | 0.83 | Էստոնիա | 0.71 | Սլովակիա | 0.71 | Հայաստան | 0.61 | <table border="1"> <thead> <tr> <th>Երկիր</th> <th>Միջին աշխատավարձ (ԱՄՆ դոլար)</th> </tr> </thead> <tbody> <tr><td>Նորվեգիա</td><td>6,792</td></tr> <tr><td>Շվեդիա</td><td>4,536</td></tr> <tr><td>Ֆինլանդիա</td><td>4,424</td></tr> <tr><td>Ավստրիա</td><td>4,368</td></tr> <tr><td>Սլովենիա</td><td>2,359</td></tr> <tr><td>Խորվաթիա</td><td>1,459</td></tr> <tr><td>Չեխիա</td><td>1,236</td></tr> <tr><td>Հունգարիա</td><td>1,176</td></tr> <tr><td>Սլովակիա</td><td>924</td></tr> <tr><td>Էստոնիա</td><td>872</td></tr> <tr><td>Մոլդովա</td><td>227</td></tr> <tr><td>Հայաստան</td><td>185</td></tr> </tbody> </table> | Երկիր | Միջին աշխատավարձ (ԱՄՆ դոլար) | Նորվեգիա | 6,792 | Շվեդիա | 4,536 | Ֆինլանդիա | 4,424 | Ավստրիա | 4,368 | Սլովենիա | 2,359 | Խորվաթիա | 1,459 | Չեխիա | 1,236 | Հունգարիա | 1,176 | Սլովակիա | 924 | Էստոնիա | 872 | Մոլդովա | 227 | Հայաստան | 185 |
| Պաշտոն | Հարաբերակցություն | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Ավստրիա | 1.42 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Ֆինլանդիա | 1.2 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Նորվեգիա | 0.96 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Սլովենիա | 0.92 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Չեխիա | 0.88 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Շվեդիա | 0.86 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Խորվաթիա | 0.85 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Մոլդովա | 0.84 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Հունգարիա | 0.83 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Էստոնիա | 0.71 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Սլովակիա | 0.71 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Հայաստան | 0.61 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Երկիր | Միջին աշխատավարձ (ԱՄՆ դոլար) | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Նորվեգիա | 6,792 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Շվեդիա | 4,536 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Ֆինլանդիա | 4,424 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Ավստրիա | 4,368 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Սլովենիա | 2,359 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Խորվաթիա | 1,459 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Չեխիա | 1,236 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Հունգարիա | 1,176 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Սլովակիա | 924 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Էստոնիա | 872 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Մոլդովա | 227 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Հայաստան | 185 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| <p>Նշում: Հայաստանի տվյալները 2012 թվականի են: Աղբյուր՝ ՄԱԿ Եվրոպայի հարցերով տնտեսական հանձնաժողով, Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն:</p> | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |

Առկա խնդիրները

1. Ուսուցիչների թվի նվազում

- Հայաստանում մանկավարժի մասնագիտության շարունակաբար անգրավիչ լինելը բացասաբար է ազդում ուսանողների՝ ուսուցչի մասնագիտությունը ընտրելու կողմնորոշման վրա: Սա ի վերջո բերում է ուսուցչական կազմի ծերացման: 2008-2012 թվականների ընթացքում 60 և բարձր տարիք ունեցող ուսուցիչների տոկոսը 7.7%-ից բարձրացել է մինչև 12%-ի (65 և բարձր տարիքային խմբի կշիռը բարձրացել է 1.5% -ից 2.5%-ի), մինչդեռ 30-35 տարեկանների թիվը նվազել է 23%-ից 20%-ի: Սա արտացոլված է նաև ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի 2011 թ. զեկույցներից մեկում:
- Նույն զեկույցը նշում է այն փաստը, որ արական սեռի ուսանողները խուսափում են դասավանդելուց՝ ցածր աշխատավարձերի պատճառով: Արական սեռի ուսուցիչների պակասը դպրոցում բացասաբար է ազդում աշակերտների հայրենասիրական և ընդհանուր հոգեբանական դաստիարակության ու զարգացման վրա՝ վտանգելով Հայաստանի ազգային անվտանգությունն իր ներկայիս բարդ աշխարհաքաղաքական իրավիճակում:

2. Մանկավարժական կրթություն ստանալ ցանկացողների շրջանում շնորհալի երիտասարդների թվի կրճատում

Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի (ՀՊՄՀ) և Երևանի պետական համալսարանի 6 մասնագիտացումների² գծով ընդունելության վիճակագրությունը ցույց է տալիս, որ ՀՊՄՀ ընդունվելու անցողիկ գնահատականը 13%-ով ցածր է (2013-2014 թթ. դրությամբ): Նույն պատկերն է նաև ՀՊՄՀ-ի և Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական

² Անվճար (պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ) ընդունելություն ըստ հետևյալ մասնագիտությունների՝ մաթեմատիկա, ֆիզիկա, կենսաբանություն, պատմություն, անգլերեն լեզու և գրականություն, ռուսաց լեզու և գրականություն:

համալսարանի համեմատության դեպքում: Այսպիսով՝ առարկայական համեմատաբար թույլ գիտելիքներով դիմորդները հաճախ ընտրում են մասնավարժական մասնագիտացում և ի վերջո մուտք գործում ուսուցչության ոլորտ:

3. Ուսուցիչների որոշ խմբերում արժեքների և էթիկայի բացեր

Ցածր աշխատավարձը որոշ ուսուցիչների շեղում է իրենց գլխավոր պարտականություններից դեպի եկամտի այլ աղբյուրների փնտրտուք, որի հետևանքով նրանք կարող են զբաղվել ինչպես պրոֆեսիոնալ (օր.՝ մասնավոր կրկնուսուցում), այնպես և ոչ պրոֆեսիոնալ գործունեությամբ: Որոշ դեպքերում դպրոցում կարող է նկատվել աշակերտների հանդեպ անազնիվ վերաբերմունք (օրինակ՝ ցածր գնահատականի նշանակում)՝ աշակերտներին անհատական պարապմունքների դաշտ բերելու նպատակով:

Եզրափակիչ նկատառումներ

Հայաստանում ուսուցիչները, որպես կարևորագույն ազգային ռեսուրս, ցածր են գնահատվում բազմաթիվ առումներով: Սա իր բացասական ազդեցությունն է ունենում դպրոցական կրթության որակի վրա: Ըստ «McKinsey & Company»-ի վերոնշյալ զեկույցի՝ դպրոցական կրթությունը Հայաստանում գտնվում է բավարարից լավ անցման տիրույթի մակարդակում³: Ավելին, նույն անցման շրջանում գտնվող մյուս բոլոր պետությունների շարքում Հայաստանը ամենացածր տեղն է զբաղեցնում ըստ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի և ուսուցչի աշխատավարձի հարաբերակցությամբ: Ուսուցիչների ցածր աշխատավարձը և մասնագիտական զարգացման հնարավորությունների պակասը ներկայիս համակարգի հիմնական թերություններն են:

«TIMSS»-ում⁴ Հայաստանի՝ 2011 թվականի տվյալները նկատելիորեն զիջում են 2007 և 2003 թվականների տվյալներին: Այն, որ դպրոցական կրթության մակարդակով Հայաստանը շարունակաբար զիջում է իր հետ համեմատելի երկրներին, մտահոգիչ հանգամանք է Հայաստանի համար:

Պետք է նպատակաուղղված միջոցներ ձեռնարկել դպրոցական կրթության վատթարացումը կանխելու համար: Ուսուցիչների՝ որպես ազգային ռեսուրսի մեջ ներդրում կատարելը արդյունավետ բարեփոխման կարևորագույն բաղադրիչներից է: Ներկայացված Կրթության գերազանցության ազգային ծրագիրը պետք է մշակվի և իրականացվի ուսուցչի մասնագիտության առկա բացերի նկատառմամբ և շտկի Հայաստանի հանրակրթության համակարգի համար բացասական հետևանքները:

³ Գնահատման քառաստիճան սանդղակով՝ 1. «զերգակց», 2. «լավ», 3. «բավարար», 4. «անբավարար»:

⁴ Trends in International Mathematics and Science Study (Մաթեմատիկայի և բնագիտության միջազգային միտումների ուսումնասիրություն):

ԳԱՂԱՓԱՐԸ

Կրթության գերազանցության ազգային ծրագրի գաղափարը «Այբ» կրթական հիմնադրամի նախաձեռնությունն է: Ծրագրի առաքելությունն է՝ ***կարևորել ուսուցչի դերը հասարակության մեջ, գրավիչ դարձնել կրթության սպասավորի մասնագիտությունը և ձևավորել մրցունակ, առաքելության զգացողություն ունեցող ուսուցիչների համայնք:***

Ծրագրի հիմնական նպատակներն են՝

- բացահայտել և խրախուսել լավագույն արդյունքներ ցուցաբերած ուսուցիչներին,
- Հայաստանում լավագույն մարդկային ռեսուրսն ուղղորդել դպրոց,
- դպրոցներում ներդնել առարկայական բարձրակարգ ծրագրեր և դասավանդման առաջատար մեթոդներ,
- աջակցել և խթանել դպրոցների ինստիտուցիոնալ զարգացմանը:

Դարեր ի վեր հայերն ուսուցչին ավանդաբար վերապահել են ամենաբարձր դիրքը հասարակության մեջ: Կտրուկ բարձրացնելով ուսուցչի մասնագիտության գրավչությունը և վերականգնելով ուսուցչի հանդեպ հարգանքն ու արժանապատվությունը Հայաստանում հասարակությունը կխթանի նոր, ստեղծագործ և մոտիվացված ուսուցիչների սերնդի զարգացումը: Ուսուցիչները կդասվեն Հայաստանի գլխավոր արժեքների շարքում և մեծապես կնպաստեն դպրոցների գործունեության շարունակական բարելավմանը և երկրում կրթական համակարգի ընդհանուր կատարելագործմանը:

Ծրագրի հիմնական ուղղություններն են՝

- ուսուցիչների ազգային հավաստագրման երկաստիճան ծրագրի զարգացում և իրագործում միջազգային հեղինակավոր կրթական կազմակերպության հետ համատեղ.
- տեղական ռեսուրսների ստեղծում ուսուցիչների նոր սերնդին համաշխարհային դասավանդման լավագույն փորձով և գիտելիքով զինելու համար.
- միջազգայնորեն ճանաչված հայալեզու կրթական հարթակի ստեղծում, որպես այլընտրանքային ծրագիր պետական և մասնավոր դպրոցների համար,
- գիտելիքի և լավագույն փորձի փոխանակման արդյունավետ հարթակի հիմնում.
- լավագույն ուսուցիչների համար պատշաճ և մրցունակ բարձր վարձատրությամբ համակարգի ապահովում:

Ծրագիրն իրականացնում են ՀՀ կառավարությունը և «Այբ» կրթական հիմնադրամը: Հայաստանի կառավարությունը կֆինանսավորի ծրագրի իրականացումը: «Այբ» կրթական հիմնադրամը պատասխանատու կլինի համակարգի մշակման և ԿԳԱԾ-ի իրականացման համար:

Ծրագրի բարձր որակն ու միջազգային լավագույն փորձին համապատասխանությունը ապահովելու համար իրականացնողները ծրագրում են ներգրավել համաշխարհային ճանաչում ունեցող կրթական հաստատության՝ որպես ծրագրի հիմնական միջազգային գործընկերոջ: Միջազգային գործընկերը խորհրդատվական ծառայություն կտրամադրի հավաստագրման ծրագրի զարգացման վերաբերյալ: Այն նաև կվավերացնի Կրթության գերազանցության ազգային ծրագրի կողմից շնորհված հավաստագիրը՝ հաստատելով դրա համապատասխանությունն իր կրթական չափանիշներին:

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏ (ԱԲ)

ԱԲ-ը ԿԳԱԾ-ի իրականացման գլխավոր գործիքն է:

ԱԲ-ը համաշխարհային մակարդակով մրցունակ և խստապահանջ ուսումնական ծրագիր է՝ նախատեսված 21-րդ դարի պետական և մասնավոր կրթական հաստատությունների համար: ԱԲ-ը նպատակ ունի դառնալ միջազգայնորեն ճանաչված գերազանցության հարթակ (Քեմբրիջի Ա մակարդակի և Միջազգային բակալավրիատի նման), որը հասանելի կլինի Հայաստանի և հայկական սփյուռքի աշակերտների ու դպրոցների համար: ԱԲ-ի ծրագրում համադրվում են մի շարք հիմնական և ընտրովի առարկաներ (մաթեմատիկա, բնագիտական առարկաներ, պատմություն, հասարակագիտական առարկաներ, լեզուներ և արվեստ), որոնք մշակված են երկու լեզվով՝ և՛ հայերեն, և՛ անգլերեն, դասավանդման համար: ԱԲ-ի ցանցի աջակցությամբ և ուղղորդմամբ դպրոցները կկարողանան առաջարկել ԱԲ-ի դիպլոմի ամբողջական ուսումնական ծրագիր կամ առանձին առարկաներ՝ կախված աշակերտի կարիքներից, դպրոցի պատրաստվածությունից և որակավորված ուսուցիչների առկայությունից:

Շուրջ ութ տարի ԱԲ-ը մանրազնին կերպով մշակվել, փորձարկվել և կատարելագործվել է «Այբ» հիմնադրամի կողմից և «Այբ» ավագ դպրոցում, որը ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից լիցենզավորված փորձարարական դպրոց է: «Այբ» ավագ դպրոցի ուսումնական ծրագրերը հայկական կրթական լավագույն ավանդների և ուսման ժամանակակից տեխնոլոգիաների համադրումն են: Այս ինտեգրման միջոցով «Այբ»-ը ստեղծել է մրցակցային նոր մշակույթ հայկական հանրակրթության ոլորտում:

ԱԲ-ի նպատակն է կրթել աշակերտներին որպես լավ քաղաքացիներ, ովքեր այս գլոբալացված աշխարհում հաղորդ են իրենց արժանատիներին և պատրաստ են պատասխանատվություն ստանձնել ինչպես սեփական անձի, այնպես էլ ազգի ապագայի համար:

ԱԲ-ի ծրագիրը մշակվել է այնպիսի անհատների սերունդներ կերտելու տեսլականով, որոնց բնորոշ են ներքոբերյալ հատկանիշները:

Ա. Ծանաչող և արարող: Մարդու ճանաչողության և գործերի ներդաշնակեցումը, տեսականի և գործնականի ճիշտ համադրությունը կամ հավասարակշռությունը ԱԲ-ի կրթական փիլիսոփայության «ոսկե կանոն» են: Դարերի խորքից եկող այս իմաստությունն է՛լ առավել կարևոր է 21-րդ դարում, երբ կրթությունը պետք է կազմակերպել գիտելիքի աննախադեպ ծավալի և ստեղծարար ակտիվության պայմաններում: Ուստի ԱԲ-ի աշակերտը ճանաչելով ստեղծում է և ստեղծելով ճանաչում:

Բ. Բարեխոհ և հոգատար: ԱԲ-ի աշակերտը պետք է ձգտի ոչ թե պարզապես ճանաչելու, այլ բարի և բարեբեր ճանաչողության կամ բարեխոհության: Բարին խորհելը և բացահայտելը արդյունավետ ճանաչողության վեկտորն է: Մտքերի բարությունը պետք է արտացոլված լինի նաև մեր գործերի մեջ՝ ԱԲ-ի աշակերտը պետք է լինի հոգատար:

Հոգատար է նա, ով սեր ունի իր մեջ, փորձում է մարդկանց համար բարիք գործել, պատասխանատու է եւ անտարբեր չի անցնում իրողությունների կողքով:
Բարեխոհությունն ու հոգատարությունը բարոյական լրացումն են «ճանաչող և արարող» հատկանիշների և շեշտում են, թե ինչ տեսակի ճանաչողությունն ու գործերն են օգտակար:

Գ. Նախաձեռնող և հավասարակշռված: Նախաձեռնողը նա է, ով ոչ միայն ինքնուրույն սկսում կամ ձեռնարկում է որևէ բան, այլև ունի արիություն և համարձակություն սկսածն առաջ տանելու և ավարտին հասցնելու: Սակայն յուրաքանչյուր նախաձեռնության մեջ պետք է լինել հավասարակշռված, այսինքն՝ շրջահայաց, խոհեմ և լուրջ՝ պահպանելով ներքին խաղաղությունը և ցուցաբերելով զսպվածություն: Շրջահայաց նախաձեռնողը անխոհեմ առաջ չի նետվում, այլ պատասխանատվությամբ ծրագրում ու խորհում է, հաշվի է առնում ծրագրի բոլոր գործոններն ու կողմերը, մարդկանց իր գաղափարի շուրջ հավաքում, ծառայում և առաջնորդում:

Դ. Չգոն եւ բաց: Չգոն նշանակում է ոչ միայն արթուն, աչալուրջ և զգույշ, այլև՝ ներքնապես ուշադիր և հավաքված: Մարդկային կյանքը ցրված է մտքերի, հիշողությունների, զգացմունքների, ապրումների մեջ, և կրթության բոլոր ժամանակների գերխնդիրն է՝ սովորեցնել մարդուն հավաքվել, ուշադիր լինել և կենտրոնանալ: Չգոնը նաև նա է, ով բարոյապես զգաստ է և պարկեշտ: Որպեսզի հավաքվածությունն ու կենտրոնացումը պատճառ չդառնան ներքին կապանքների ու սևեռումների, ԱԲ-ի աշակերտը պետք է լինի բաց: ԱԲ-ի խնդիրներից մեկն է՝ սովորեցնել մարդուն ազատ և բաց լինել, ազատվել ներքին կապանքներից, հաղորդակից լինել իրականությանը:

«Այբ» հիմնադրամը գտնվում է ԱԲ-ի ուսումնական ծրագրի, առանձին առարկաների ուսումնական ծրագրերի և «Այբ» դպրոցի միջազգային հավաստագրման գործընթացում: Սա խստապահանջ գործընթաց է, որին «Այբ» հիմնադրամը տարիներ շարունակ պատրաստվել է, և որի նպատակն է մատչելի դարձնել միջազգայնորեն ճանաչված ԱԲ-ի ծրագիրը այլ դպրոցների համար նույնպես՝ խթանելով կրթության գերազանցությունը և հնարավորություն տալով հայկական դպրոցի շրջանավարտներին օգտվել կրթական լավագույն ծրագրերից:

Ինստիտուցիոնալացում

ԿԳԱԾ-ի **առաջին** նախապատրաստական փուլում (2014-2016 թթ.) ԱԲ-ը լրամշակվելու և ամբողջովին բերվելու է միջազգային չափորոշիչներին համապատասխանության: Այնուհետև գրանցվելու է Հայաստանի Հանրապետության և միջազգային որակավորման համապատասխան հաստատությունների կողմից: Այս փուլում պատրաստվելու է ծրագիրը ներդնող փորձագետ-ուսուցիչների առաջին խումբը (60 հոգի):

ԿԳԱԾ-ի **երկրորդ** փուլում (2017–2019 թթ.) ԱԲ-ը ամբողջությամբ ներդրվելու է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հիմնանորոգված 12 ավագ դպրոցներում: Ծրագրի իրականացման համար այս փուլում պատրաստվելու և որակավորվելու է մոտ 500 ուսուցիչ:

ԿԳԱԾ-ի **երրորդ** փուլում (2020-2023 թ.թ.) ԱԲ-ը ներդրվելու է բոլոր ավագ դպրոցներում՝

յուրաքանչյուրում առնվազն մեկական հոսքային դասարանով: Ծրագրի իրականացման համար այս փուլում պատրաստվելու և որակավորվելու է 1500 ուսուցիչ:

Հավաստագրված ուսուցիչներն աջակցություն կստանան ու կղեկավարվեն ԿԳԱԾ-ի կողմից, որն իր հերթին կհամագործակցի այս ուսուցիչների աշխատավայրերի ու դրանց ղեկավար մարմինների հետ՝ համոզվելու համար, որ ԿԳԱԾ-ով հավաստագրված ուսուցիչները կարողանում են արդյունավետորեն կիրառել Նոր ուսումնական ծրագիրը և ուսուցման ու գնահատման մեթոդներն իրենց դպրոցներում: Եվ այսպես, մեկ տասնամյակի ընթացքում բարելավվելով ուսումնական ծրագրերը, ուսուցումն ու գնահատումը՝ ԿԳԱԾ-ի նպատակն է ինստիտուցիոնալացնել Նորարարությունն ու գերազանցությունը հայկական դպրոցական համակարգում՝ ներգրավելով հարյուրավոր դպրոցներ, հազարավոր ուսուցիչներ ու տասնյակ հազարավոր աշակերտներ:

Դրական արդյունքների պլանավորում

Առավելագույն արդյունք ապահովելու, գործողությունների ընթացքն անտեղի չխախտելու և փոփոխության հանդեպ դիմադրությունը հաղթահարելու համար՝ ծրագրի իրականացումը պետք է մանրագնին կերպով պլանավորվի, ինչպես ցանկացած այլ ջանք, որն ուղղված է առկա ծառայությունների բարելավմանը: Ծրագրի ներդրումը կսկսվի ԿԳԱԾ-ի մասին և ընդհանրապես մրցունակ կրթության կարևորության մասին հանրային իրազեկման արշավով: Հայ հասարակությունում ավանդաբար առկա կրթության բարձր արժևորման շնորհիվ ակնկալվում է, որ հաջողության պատմությունները կօգնեն կառուցել ու պահպանել կրթական բարեփոխումների մի մեծ շարժում, իսկ քաղաքացիները կդառնան որակյալ կրթության ջատագովներ ու պաշտպաններ:

Ծրագիրը, ունենալով համազգային բնույթ, ենթադրում է սերտ համագործակցություն կրթության նախարարության, մարզային և համայնքային կառույցների հետ: Կրթության որակի բարձրացումը ոչ միայն այս ծրագրի, այլև պետական բոլոր կառույցների և հասարակության գերխնդիրն է: Սա նշանակում է, որ որակը ոչ թե պետք է վերևից պարտադրվի, այլ պահանջարկված լինի տեղում: Պետք է ստեղծել կրթությամբ իրագործվելու երազանք և հնարավորություն ընձեռել այդ երազանքն իրագործելու: Այս առումով ԿԳԱԾ-ն առաքելություն է, իսկ այդ ծրագրի ուսուցիչները պետք է լինեն կրթության Նոր մշակույթի առաքյալները: Իհարկե, որևէ առաքելություն չի կարող պսակվել հաջողությամբ, եթե չկա դրա անհրաժեշտության հանրային ինքնագիտակցում: Եթե հասարակությունը կրթության սպառող է և ոչ թե մասնակից, ապա այդ կրթությունից ոչ մի լավ բան չի ստացվի: Կրթությունը համայնքային կյանքի սիրտն է, հետևաբար իր Էությունբ համայնքաշինական բնույթ ունի:

ԱԲ-ի ուսումնական ծրագրի համար պատրաստվածությունը կխթանվի «Այբ» հիմնադրամի կողմից, որը կշարունակի մշակել և տրամադրել Նոր նյութեր ու տեխնոլոգիաներ, պահպանել միջազգային հավաստագրումն ու ճանաչումը, իրականացնել աշակերտների միջազգայնորեն մրցակցային և ընդունված գնահատում:

Ազդեցության ակնկալվող շրջանակը

Նախատեսվում է, որ Հայաստանում մեկ տասնամյակի ընթացքում ԱԲ-ը կներդրվի բոլոր ավագ դպրոցներում (առնվազն մեկական դասարանով), և Նրա համար կհավաստագրվի մոտավորապես 2000 ուսուցիչ: Նրանք կդառնան փոփոխություններ իրականացնողներ՝

օրինակ ծառայելով Հայաստանի դպրոցների ուսուցիչների ներկայիս ու նոր սերնդի համար, ինչպես նաև կատեղծեն դպրոցներում դասավանդման նորագույն մոտեցումների տարածումը խթանող ցանց: ԱԲ-ի ուսուցիչները կընտրվեն ըստ մենտորության ներուժի և կգնահատվեն թեկնածության շրջանում: Որպես շարունակական հավաստագրման պայման՝ նրանցից կպահանջվի ընդգրկվել նվազագույնը 10 ուսուցչի մենտորության ծրագրում (ԿԳԱԾ-ի մեթոդաբանության և հաշվետվողականության կիրառմամբ): Այսպիսով, ԿԳԱԾ-ի դրական արդյունքներն ուղղակիորեն (հավաստագրման միջոցով) կամ անուղղակիորեն (մենտորության միջոցով) կտարածվեն 20,000 ուսուցչի վրա:

Ընդհանուր առմամբ, ակնկալվում է, որ ԿԳԱԾ-ը դրական ուղղակի և անուղղակի ազդեցություն կունենա Հայաստանի հանրակրթական համակարգի վրա: Ակնկալվող հիմնական արդյունքներն են՝

- մարդկային լավագույն կապիտալի ներգրավումն ու պահպանումը դպրոցներում,
- հասարակության մեջ ուսուցչի հեղինակության բարձրացումը և ուսուցչի դերի ընկալման փոփոխումը,
- տեղական ու միջազգային կրթական չափորոշիչների ներդաշնակեցումը և համաշխարհային լավագույն փորձի տեղայնացումը Հայաստանում:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՓՈՐՁԸ

Ներածություն

Դպրոցական համակարգի բարելավումը համընդհանուր և բազմաբարդ խնդիր է, որը պահանջում է բազմակողմանի մոտեցումներ: Համակարգի գանազան բաղադրիչները պետք է բարելավվեն, որպեսզի համընդհանուր առաջընթաց գրանցվի: Սա ներառում է հանրակրթական համակարգում դասավանդման որակը և ուսուցիչների գնահատումը, աշակերտի գնահատման մեթոդները, դպրոցական համակարգի էթիկան և մշակույթը:

Ուսուցիչների գնահատման համակարգը դասավանդման որակի բարելավմանը տանող ապացուցված ուղի է: Հայաստանում Կրթության գերազանցության ազգային ծրագիրը ուսուցիչների գնահատումը և համապատասխան մասնագիտական զարգացումը դիտարկում է որպես դրական փոփոխություններին միտված հիմնական քայլ և շարժիչ ուժ: Համաշխարհային լավագույն փորձի հետազոտությունը ցույց է տալիս, որ չկա մի մոդել, որը գերակա է մյուսների նկատմամբ: Փոխարենը յուրաքանչյուր պետություն մշակում է ուսուցիչների գնահատման իր սեփական համակարգը՝ միջազգային լավագույն փորձի տարբեր համակարգերը փոփոխելով և հարմարեցնելով իր ուրույն կարիքներին ու հանգամանքներին:

Ուսուցիչների մասնագիտական աճի խթանումը

Դպրոցական համակարգի համաշխարհային լավագույն օրինակները, որոնք արձանագրել են նշանակալի, կայուն և համատարած բարելավում, ունեն մի քանի ընդհանուր մոտեցում⁵:

- ուսուցիչների համագործակցությունը, փորձի փոխանակումը և իրենց գործընկերների առաջընթացին նպաստելու պատրաստակամությունը.
- դպրոցների և կրթական համակարգը կարգավորող կենտրոնի միջև միջանկյալ օղակի առկայությունը, որը հեշտացնում է հաղորդակցությունը, օրինակ՝ մարզային հաստատություն, որը պատասխանատու է տեղական հանրակրթական համակարգի որոշակի ոլորտների համար (սա հնարավորություն կտա դպրոցներին ավելի արդյունավետ տեղաբաշխել ռեսուրսները և փորձի փոխանակում կատարել).
- ուսուցիչների գնահատման գործընթացի իրականացումը՝ մասնագիտական առաջխաղացման ուղիները և խթանումը բացահայտելու նպատակով (սա ուղղակիորեն մոտիվացնում է ուսուցիչներին՝ խթանելով նրանց մասնագիտական աճը):

Մասնագիտական զարգացումը և ուսուցիչների գնահատումը

Անհատական զարգացման և գործընկերների հետ համագործակցության միջոցով բարձր որակավորման հասած ուսուցիչը մեծ արժեք է դպրոցական համակարգի համար: Այս մոտեցումը բնորոշ է զարգացած դպրոցական համակարգերին, որոնք

⁵ McKinsey & Company (2010), «Ինչպես են աշխարհի ամենամեծ բարելավումներ արձանագրած դպրոցական համակարգերը շարունակում կատարելագործվել»: Չեկույցը վերլուծում է դպրոցական համակարգերի համաշխարհային լավագույն փորձը: Ընտրության չափանիշները հիմնված են միջազգային գնահատման մի շարք համակարգերի հետազոտության վրա, ինչպիսիք են՝ PISA, TIMSS և PIRLS: Ուսումնասիրության մեջ ներառված են տարբեր աշխարհագրական տեղակայմամբ և տարբեր չափի, ձևի և արդյունքներով դպրոցական համակարգ ունեցող երկրներ, որոնք գտնվում են կրթական զարգացման տարբեր փուլերում:

օգտագործում են այդ ուսուցիչների հմտությունները՝ տալով նրանց հավելյալ պարտականություններ, ինչպիսիք են ուսումնական պլանի մշակումը և գործընկերների վերապատրաստումը: Ավելին, մասնագիտական զարգացման ուղին մի մեխանիզմ է՝ ներդրած ավանդի համար ուսուցիչներին խրախուսելու և համապատասխան վարձատրություն ապահովելու համար: Այս նպատակով մշակվում է կարիերայի բազմաստիճան համակարգ, որտեղ յուրաքանչյուր մակարդակի համար սահմանված են որոշակի պարտականություններ և խրախուսումներ: «McKinsey & Company»-ն նկարագրում է ուսուցիչների մասնագիտական աճի մեխանիզմների չորս օրինակ տարբեր երկրներից:

Լիտվա

1998 թվականին Լիտվայի կառավարությունը ներդրել է ուսուցիչների հավաստագրման պարտադիր համակարգ, որպեսզի բարձրացնի մանկավարժի մասնագիտության հեղինակությունը և գրավի շնորհալի սովորողներին: 5 մակարդակ ունեցող մասնագիտական առաջիադացման համակարգը, որում որակավորումը և պարտականությունները համապատասխանեցված են աշխատավարձի հետ, նպատակ ունի խթանել ուսուցիչների մասնագիտական աճը: Դպրոցների տնօրենները որոշիչ դեր ունեն որակավորման ցածր մակարդակում, մինչդեռ որակավորման բարձր մակարդակների շնորհումը ավելի կենտրոնացված է: Ամեն 3 տարին մեկ պարտադիր անցկացվում է վերահավաստագրում:

Լեհաստան

Խուսափելով լեհական հետխորհրդային հասարակության բուռն արձագանքից՝ կառավարությունը որոշեց ուսուցիչների հավաստագրումը չդարձնել պարտադիր: Փոխարենը այն շոշափելի վարձատրություն և պարգևավճարներ առաջարկեց մասնագիտական առաջիադացման 4 մակարդակ ունեցող համակարգի բարձր մակարդակներում գտնվող ուսուցիչներին: 2009 թ. դրությամբ՝ բարձրագույն երկու մակարդակների որակավորում ունեցող մասնագետները կազմում էին Լեհաստանի ուսուցիչների 78%-ը⁶:

Չինաստան

Չինաստանում ներդրված են ուսուցիչների գնահատման ծրագրեր ազգային, նահանգային և մարզային մակարդակներով: Որակավորման յուրաքանչյուր մակարդակում գործում են կոնկրետ պարտականություններ, իսկ բարձր մակարդակներում ներդրված է մենտորություն: Դասավանդման, զարգացման թիմերի և առարկայական խմբերի ղեկավարները կանոնավոր հանդիպում են փորձի փոխանակման և առաջիկա ծրագրերի քննարկման համար: Նպատակն է հասնել համակարգում հետևողական բարելավումների:

Հոնկոնգ

Հոնկոնգն ավելի փափուկ մոտեցում է ընտրել ուսուցիչների մասնագիտական աճի խնդրին: Այն ուսուցիչներին ուղղորդում է, սակայն չի պարտադրում մասնակցել մասնագիտական աճին միտված վերապատրաստումներին, որոնք դրական արձագանք են ստացել ուսուցիչների շրջանում:

⁶ eTwinning (2010), «Ուսուցիչների մասնագիտական աճը. ներկա իրավիճակի ուրվագիծ»:

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱԿՆԱՐԿ

Ներածություն

Ընդհանուր առմամբ՝ բարձրակարգ դասավանդումն իրականացվում է մի շարք մոտեցումների կիրառման միջոցով⁷

- ուսուցչի մասնագիտությունը գրավիչ դարձնել բարձր որակավորում ունեցող թեկնածուների համար.
- ուսուցիչների համար ապահովել վերապատրաստման դասընթացների հնարավորություն.
- որակավորման մրցանակներ շնորհելիս հիմնվել ուսուցչի հաջողված փորձը և վաստակը վկայող տվյալների վրա.
- առաջարկել մասնագիտական աճի արդյունավետ եղանակներ՝ պահանջելով որակավորման բարձրացում և գիտելիքների խորացում.
- ստեղծել աշխատանքային գրավիչ պայմաններ և վարձատրության համակարգեր՝ որակյալ մասնագետներին դպրոցական համակարգում պահելու համար.
- ներգրավել ուսուցիչներին՝ որպես դպրոցական համակարգում բարեփոխումներ և նորամուծություններ իրականացնողների:

Սակայն այս մոտեցումների իրագործումը և դրանց շարունակականությունը կարող են վտանգված լինել այն պարագայում, եթե չկա ուսուցիչների գնահատման արդյունավետ համակարգ՝ «լավ ուսուցիչ» հասկացության միասնական ընկալմամբ, և եթե թերի են աշխատանքի ընդունման և հավաստագրման ընթացակարգերը, վերապատրաստման ու մենտորության գործընթացները և մասնագիտական աճի հնարավորությունները:

Վերջին տարիներին կրթության ոլորտի շահառուները գնալով ավելի շատ են կարևորում ուսուցիչների գնահատման դերը դասավանդման որակի բարելավման գործում: Գնահատման համակարգը հնարավորություն կտա Հայաստանին խթանելու և խրախուսելու ուսուցիչների մասնագիտական աճը՝ ստեղծելով մասնագիտական առաջխաղացման բազմաստիճան հարթակ: Առաջխաղացման այդ ուղին հնարավորություն կտա արդյունավետորեն օգտագործելու շնորհալի ուսուցիչների ներուժը՝ նրանց վրա դնելով համապատասխան պարտավորություններ և դերակատարումներ: Ուսուցիչների գնահատումը կապված է մանկավարժի մասնագիտության գրավչության խնդրի հետ, երբ մասնագիտական առաջխաղացումն ուղեկցվում է աշխատավարձի համապատասխան բարձրացմամբ:

Ընդհանուր առմամբ՝ ուսուցիչները սատարում են իրենց գնահատման գործող համակարգերին: ՏՀԶԿ-ի «Դասավանդման և ուսուցման միջազգային հետազոտության» համաձայն՝ ուսուցիչների 83%-ն իրենց մասին արձագանքները համարում է արդարացի և հիմնավորված, իսկ 78%-ը վկայում է, որ հետադարձ կապն օգտակար էր իրենց մասնագիտական աճի համար:

⁷ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (2013), «Ուսուցիչներ 21-րդ դարի համար. ինչպես օգտագործել գնահատումը՝ դասավանդումը կատարելագործելու համար»:

Ուսուցիչների գնահատման մոտեցումները

Գոյություն ունեն ուսուցիչների գնահատման տարբեր մոտեցումներ՝ սկսած կենտրոնացված, ազգային չափորոշիչներից մինչև դպրոցների տեղական մոտեցումներ: Ապացուցված է, որ ուսուցիչների գնահատման համակարգված մոտեցումները դասավանդման որակի կատարելագործման կարևոր միջոց են:

Ընդհանուր առմամբ՝ ուսուցիչների գնահատումը նպատակ ունի բացահայտել, թե որքանով է ուսուցիչը որակավորված տվյալ պաշտոնի համար, և հետադարձ կապի միջոցով ուղղորդել ու նպաստել ուսուցիչների մասնագիտական աճին: Նպատակը, կանոնավորությունը, ձևաչափը և այլ հատկանիշները ստեղծում են գնահատման բազմաթիվ ձևաչափեր՝

- փորձաշրջանի կիրառում,
- արդյունքների կառավարում,
- ուսուցիչների գրանցում կամ հավաստագրում,
- կանոնավոր գնահատում,
- առաջխաղացման համար գնահատում,
- խրախուսման ծրագրեր:

Համակարգերից շատերը նպատակաուղղված են ուսուցիչների կատարելագործմանը և հաշվետվողականության բարձրացմանը: Հաշվետվողականության նպատակն է որոշել, թե որքանով է ուսուցիչը համապատասխանում որակավորման սահմանված չափանիշներին: Հաշվետվողականության գնահատման ժամանակ հաճախ ներգրավվում են արտաքին գնահատողներ, և այն իրականացվում է կենտրոնացված և ոչ թե տեղային սկզբունքով:

Ուսուցիչների գնահատման համակարգն ունի մի շարք չափորոշիչներ, որոնց հիման վրա գնահատվում է ուսուցչի որակավորման աստիճանը.

- ուսուցիչների մասնագիտական նկարագիր կամ դասավանդման չափորոշիչներ,
- ուսուցիչների աշխատանքի և պարտականությունների նկարագրություն,
- տեղական դպրոցների զարգացման ծրագրեր և ներքին կանոնակարգեր:

Գնահատման համակարգի կառավարումը կարող է լինել կենտրոնացված կամ ապակենտրոնացված, այսինքն՝ գործընթացը կարող է վարել հատուկ մարմինը՝ պետական մակարդակի վրա, կամ այն կարող է իրականացվել տեղում՝ դպրոցների և տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով: Շատ երկրների նպատակն է ուսուցիչների գնահատման համակարգը դարձնել կենտրոնացված՝ չափորոշիչների շեղումներից խուսափելու համար:

Ուսուցիչների գնահատման ընթացակարգերը

Կախված նպատակից՝ ուսուցիչների գնահատումը կարող է լինել պարտադիր կամ կամավոր: Գնահատման հաճախականությունը ևս կախված է նպատակից: Գնահատման իրականացման գլխավոր գործիքներն են՝

- ուսուցչի ինքնագնահատում.
- դասալսումներ.
- նպատակի սահմանում և անհատական հարցազրույցներ.
- ուսուցչի մասնագիտական թղթապանակ՝
 - դասապլաններ և ուսումնական նյութեր,

- աշակերտների աշխատանքների օրինակներ և այդ աշխատանքների մեկնաբանություններ,
- ինքնագնահատման հարցաթերթիկ և սեփական եզրակացություններ:

Գնահատման այլընտրանքային գործիքները ներառում են՝

- թիմային աշխատանք և պլանավորում.
- միջդպրոցական նախագծերի իրականացում.
- կառավարում և վարչական աշխատանքներին օժանդակություն.
- մասնագիտական խորհրդակցություն ծնողների հետ.
- կրթության զարգացման համար տեղական գործընկերության ստեղծում.
- մասնակցություն մասնագիտական աճի միջոցառումներին:

Գնահատման որոշ համակարգեր գնահատում են նաև ուսուցիչների անձնական հատկանիշները՝ որպես աշակերտների համար օրինակ ծառայելու առանցքային բաղադրիչ: Օրինակ՝ Ֆրանսիայում գնահատվում են ուսուցիչների ճշտապահությունը և հեղինակությունը:

Ուսուցիչների գնահատման շահառուներ

Ուսուցիչների գնահատման արդյունավետ համակարգ ստեղծելու համար պետք է ունենալ համակարգված մեխանիզմներ, գնահատման համապատասխան չափորոշիչներ, պատասխանատվության հասցեագրում և շարունակական դիտարկում: Պետական մարմինները կամ իրենք են ապահովում այս գործոնները, կամ լիազորում են դպրոցներին ու տեղական ինքնակառավարման մարմիններին: Գնահատման համակարգի առանցքային շահառուներն են՝

- կրթության ոլորտի մարմինները,
- պետական մարմինները,
- կրթության տեսչությունները,
- ուսուցիչների մասնագիտական կազմակերպությունները,
- դպրոցները և դպրոցների ղեկավարները,
- ծնողները,
- արտաքին տեսուչները,
- գործընկեր ուսուցիչները,
- աշակերտները,
- այլ գնահատողներ:

Այս շահառուների ներգրավման և պատասխանատվությունների մակարդակը կախված է գնահատման համակարգի կենտրոնացվածության մակարդակից: Բազմաշերտ գնահատման համակարգերը հանգեցնում են ողջամիտ որոշումների կայացման, թեպետ այս գործընթացը մեծ ռեսուրս է պահանջում:

Գնահատման արդյունավետությունն ապահովելու համար և՛ գնահատողները, և՛ ուսուցիչները պետք է գիտենան գնահատման գործընթացի և չափորոշիչների ձևաչափը: Այս համատեքստում դպրոցի տնօրենները կարող են լավ չտիրապետել դպրոցական որոշ առարկաների, որպեսզի գնահատեն ուսուցչի մասնագիտական գիտելիքները: Հատկապես արդյունավետ է գործընկերների գնահատումը (ինչպես, օրինակ, Չիլիում և Պորտուգալիայում)՝ պայմանով, որ գնահատողները լինեն բարձր որակավորմամբ ուսուցիչները:

Ուսուցիչների գնահատման արդյունքների օգտագործումը

Գնահատումը բարձրացնում է ուսուցչի շահագրգռվածությունը: Ուսուցիչները բացահայտում են իրենց ուժեղ և բարելավման կարիք ունեցող կողմերը և ավելի են ոգևորվում իրենց մասնագիտական աճի հնարավորություններով: Մասնագիտական առաջխաղացման հեռանկարը խրախուսում է ուսուցիչներին աշխատելու և բարձրանալու մասնագիտական առաջընթացի աստիճաններով: Ուսուցչի գնահատումը նախատեսում է խրախուսում արդյունավետ գործունեության համար: Շատ երկրներ գնահատումը զուգակցում են մասնագիտական առաջխաղացմանը (օրինակ՝ Սինգապուրում), ինչը նաև նպաստում է վարձատրության աճին: Որոշ այլ դեպքերում խրախուսումը չի առնչվում կարիերայի զարգացմանը, այլ մեկնագամյա պարգևավճար է: Ակնկալվածից ցածր արդյունքները կարող են հանգեցնել պաշտոնի իջեցման կամ աշխատանքից ազատման:

Ուսուցիչների գնահատումը կարող է բացահայտել նրանց չօգտագործված ներուժը և արդյունավետորեն օգտագործել կամ խթանել այն (օրինակ՝ Գերմանիայում): Սա ապահովում է մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարում:

Դասավանդման որակի բարձրացման ազդեցությունն աշակերտների առաջադիմության վրա չափվում է այլ գործոններով (օրինակ՝ ծնողների կրթությամբ և նրանց կողմից աջակցությամբ):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

- Ուսուցիչների գնահատումը, մասնագիտական աճի և համապատասխան խրախուսման զուգադրությամբ, առանցքային դեր ունի դասավանդման որակի կատարելագործման գործում:
- Ուսուցիչների գնահատման համակարգը կարող է նպաստել մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարմանը՝ նոր հմտությունների բացահայտման և պարտականությունների նպատակային հասցեագրման միջոցով:
- Գիտելիքների փոխանակումը և գործընկերների մենտորությունը կարող է շահավետ լինել հանրակրթական համակարգի համաչափ բարելավման համար:
- Ուսուցիչների գնահատումը կատարվում է գերազանցապես առարկայական գիտելիքների հիման վրա, սակայն ավելի ամբողջական մոտեցումը (ներառյալ անձնային հատկանիշները և աշխատանքային ոճի գնահատումը) կարող է ավելի նպաստավոր լինել:
- Որոշակի ժամանակ կարող է պահանջվել, մինչև որ ծրագիրն իր լայնածավալ ազդեցությունն ունենա, քանի որ ընդհանուր արդյունքները բաշխված են ժամանակահատվածների վրա:

Ընդհանուր առմամբ՝ չկա ուսուցիչների զարգացման կամ կրթության որակի կատարելագործման լոկ մեկ արդյունավետ ռազմավարություն: Հատուկ նպատակները, որոնք համապատասխանեցված են տվյալ երկրի սոցիալ-մշակութային պայմաններին և յուրահատուկ միջավայրին, կարևոր նշանակություն ունեն ամենաարդյունավետ մոտեցման մշակման և կիրառման գործում: Համակարգի ընտրությունն ու արդյունավետությունը կախված են մի շարք գործոններից, օրինակ՝ դպրոցական համակարգի ներկայիս վիճակից և իրականացման համար ներդրվող ռեսուրսների ծավալից:

ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Հավաստագրման մակարդակները

Կրթության գերազանցության ազգային ծրագրի և Արարատյան բակալավրիատի շրջանակներում նախատեսված է հավաստագրման 2 մակարդակ՝

1. ԱԲ-ի ավագ ուսուցիչ,
2. ԱԲ-ի ուսուցիչ:

Հավաստագրումը կփաստի ուսուցչի մասնագիտական հատկանիշները, գիտելիքները, հմտությունները: Այն նաև կփաստատի ուսուցչի մասնագիտական առաջխաղացման տվյալ փուլի ակնկալիքները: Հավաստագրման մակարդակները և ծրագրված գործողությունները կօգնեն հավաստագրված ուսուցիչներին բացահայտելու իրենց մասնագիտական աճի կարիքները և խորացնելու գիտելիքները:

Հավաստագրման չափանիշները հիմնված կլինեն միջազգային լավագույն փորձի վրա, սակայն որոշ կետեր կտեղայնացվեն: Հավաստագիրը կշնորհվի օրենսդրությամբ սահմանված կարգով:

Միջազգային գործընկերը կփաստատի ԿԳԱԾ-ի չափորոշիչները և վերջինիս գործունեության համապատասխանությունը համաշխարհային լավագույն փորձի չափանիշներին, ինչպես նաև հավանություն կտա ուսուցչի՝ ԿԳԱԾ-ով հավաստագրմանը:

Հավաստագրման համար դիմորդները պետք է դիմեն ԿԳԱԾ-ին՝ գնահատման, պայմանական ընդունման և վերջնական հավաստագրման համար:

Հավաստագրման ձևաչափը

Հավաստագրման յուրաքանչյուր ծրագիր մշակվելու է միջազգային գործընկերների հետ համագործակցությամբ, առկա բարձրագույն, ռեֆլեկտիվ, մասնագիտական ինքնազարգացման մեթոդաբանության, մենտորության, փոխադարձ աջակցության և առցանց ուսուցման գործածությամբ: Հավաստագրման յուրաքանչյուր ծրագիր կմշակվի մոտավորապես 20 շաբաթվա՝ աշնանային և գարնանային կիսամյակների համար: Հավաստագրման դիմորդների դասավանդման պարտականությունների խախտումը նվազագույնի հասցնելու համար հավաստագրման ծրագրերը ԿԳԱԾ-ում կկազմվեն դեմառդեմ մոդուլներով ամառային, գարնանային և աշնանային արձակուրդների ժամանակ՝ հավաստագրման ծրագրի սկզբում, մեջտեղում և վերջում: Դեմառդեմ մոդուլների միջև կլինեն նաև պարբերական անհատական և խմբային ուսուցումներ վերապատրաստողների կողմից, ինչպես առցանց, այնպես էլ հավաստագրի դիմորդների դպրոցներում:

ԱԲ-ի ավագ ուսուցիչներ

ԱԲ-ի ավագ ուսուցիչները կլինեն իրենց առարկայի ոլորտում մեծ հեղինակություն վայելող, դասավանդման գործում նշանակալի հաջողությունների հասած մասնագետները: Նրանք հանդես կգան որպես նորարարներ, նոր մեսուրսների մշակողներ և մյուս ուսուցիչների վերապատրաստողներ: ԱԲ-ի ավագ ուսուցիչները պետք է ոչ միայն լավագույնս տիրապետեն իրենց առարկային, այլև ունենան տվյալ առարկայից տեղական և միջազգային օլիմպիադաներին նախապատրաստվելու համար անհրաժեշտ գիտելիքներն ու դասավանդման առաջադեմ հմտություններ: Ակնկալվում է, որ ԱԲ-ի ավագ ուսուցիչներն իրենց աշխատանքային ծանրաբեռնվածությունը հավասարապես կբաշխեն իրենց առարկայի ուսումնական ծրագրի մշակման ու զարգացման և այլ ուսուցիչներին վերապատրաստելու միջև: Բացի դրանից, նրանք պետք է ուսումնասիրեն առարկայի բովանդակության, կրթական տեխնոլոգիաների և մեթոդների ժամանակակից լավագույն մոտեցումները:

ԱԲ-ի ուսուցիչներ

ԱԲ-ի ուսուցիչների հավաստագրումը պահանջում է դասավանդման առաջնակարգ հմտություններ և առարկայի խոր գիտելիքներ՝ միջազգայնորեն ճանաչված ծրագրերին համապատասխան: ԱԲ-ի ուսուցիչների գլխավոր պարտականությունները կներառեն դպրոցում տվյալ առարկայի դասավանդումը՝ բարձրակարգ գիտելիքների ներդրմամբ և դասավանդման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ, ինչպես նաև կրթության գերազանցության ազգային ծրագրի շրջանակում փորձաշրջան անցնող ուսուցիչների մենտորության իրականացումը: Նրանք կդառնան իրենց առարկայի դասավանդման լավագույն փորձի տարածողներ՝ գործընկերների հետ կիսելով իրենց գիտելիքները և հմտությունները: ԱԲ-ի ուսուցիչներն իրենց մասնագիտական ոլորտում նաև կիրականացնեն ուսուցիչների որոշ վերապատրաստում, ինչպես նաև կներգրավվեն ԱԲ-ի ավագ ուսուցիչների ղեկավարած առարկայական նոր ծրագրերի և մեթոդաբանության մշակման աշխատանքներում: Ընդհանուր առմամբ՝ ԱԲ-ի ուսուցիչները կդառնան միջուկը բազմաշերտ այն ցանցի, որը մշակվել է կրթության գերազանցության ազգային ծրագրի գաղափարի հիման վրա:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Ուսուցչի հավաստագրման ուղիներ

ԿԳԱԾ-ը մշակվել է որակին հետամուտ գործող ուսուցիչների մասնագիտական գործունեության բարելավման, ինչպես նաև խոստումնալից ուսանողներին ու մասնագետներին ուսուցչի մասնագիտություն ընտրել տալու համար: ԿԳԱԾ-ն առաջարկում է հավաստագրման մի շարք ճկուն ուղիներ՝ որակյալ մարդկային ռեսուրսը դեպի դպրոց ուղղելու համար:

Ցանկացած հավաստագրի դիմելու համար դիմորդը պետք է ունենա մագիստրոսի աստիճան, ավարտի ԱԲ-ի ուսուցչի մենտորության ներքո թեկնածուական շրջանը և լինի դպրոցում դասավանդող ուսուցիչ (դա նշանակում է, որ նրա ակադեմիական աստիճանը պետք է համապատասխանի հայկական պետական դպրոցական համակարգում դասավանդման մանկավարժական չափանիշներին): Ընտրությունը կկատարվի յուրաքանչյուր տարվա գարնանը՝ սկսած 2016 թվականից:

Նախնական փուլից հետո ԱԲ-ի ավագ ուսուցիչները հիմնականում կընտրվեն փորձառու, հավաստագրված ԱԲ-ի ուսուցիչներից: Նրանք կընտրվեն հրավերքով կամ առաջադրմամբ (ինքնառաջադրմամբ կամ այլոց կողմից)՝ հիմնվելով դասավանդման ոլորտում իրենց ձեռքբերումների մասնագիտական թղթապանակի և հարակից այլ գործունեությունների վրա (հետազոտություն, գրագրություն, ուսումնական ծրագրերի մշակում, մենտորություն և ուսուցիչների վերապատրաստում, աշակերտներին տրամադրվող խորհրդատվություն): Նախատեսվում է, որ 2015-2023 թթ.-ին կհավաստագրվի ԱԲ-ի մոտ 200 ավագ ուսուցիչ:

ԱԲ-ի ուսուցիչները, որոնց թիվը 2023 թ.-ին կհասնի մոտ 2000-ի, կընտրվեն քառափուլ գործընթացի միջոցով: Փուլերն են՝

1. որակավորող քննություն (կքննի դիմորդ ուսուցչի առարկայական մասնագիտացումը, ինչպես նաև հարակից թեմաներին տիրապետումն ու հաղորդակցման հմտությունները).
2. մասնագիտական թղթապանակի ուսումնասիրություն (թղթապանակը պարունակում է մասնագիտական ձեռքբերումների և փորձի վերաբերյալ տեղեկություններ, երաշխավորագրեր, մասնագիտական նպատակների և փիլիսոփայության նկարագրություն, աշակերտների աշխատանքների օրինակներ, ինչպես նաև հոդվածներ, հետազոտություններ, ակադեմիական աստիճանի մասին տեղեկություններ, լիցենզիաներ, հավաստագրեր, կառավարման և ուսուցիչների վերապատրաստման, ինչպես նաև մենտորության փորձառությունը հավաստող փաստաթղթեր):
3. ԱԲ-ի հավաստագրված ուսուցչի մենտորությամբ թեկնածուական շրջան.
4. ԱԲ-ի հավաստագրման ծրագրի պահանջների հաջող հաղթահարում:

Առկա է ԱԲ-ի ուսուցչի հավաստագրման երեք ուղի:

- Գործող ուսուցչի ուղի: Գործող ուսուցիչները կարող են ցուցակագրվել ԱԲ-ի ուսուցչի հավաստագրման ծրագրում, եթե ունեն երկու տարվա մասնավարժական փորձ:
- Նոր ուսուցչի ուղի: Մագիստրատուրայում ուսանելու ընթացքում կամ այն ավարտելուց հետո նրանք կընդունվեն մեկ տարի տևող թեկնածուական փուլ, որի ընթացքում նրանք կանոնավոր կերպով կհանդիպեն ԱԲ-ի մենտորի հետ և ԱԲ-ի ծրագրով աշխատող դպրոցում կանցնեն ուսուցչական պրակտիկա (սվազագույնը 6 շաբաթ՝ 240 ժամով), որի ընթացքում նրանք պետք է հավաքեն դասավանդման թղթապանակ՝ որպես մասնագիտական թղթապանակի մի մաս: Թեկնածուական փուլն ու մագիստրատուրան ավարտելուց հետո նրանք իրավասու կլինեն ցուցակագրվելու ԱԲ-ի ուսուցչի հավաստագրման ծրագրի համար (որը պահանջում է, որ նրանք լինեն դպրոցի գործող ուսուցիչ):
- Երկրորդ մասնագիտության ուղի: Այս ուղին մագիստրոսի աստիճան ունեցող այն մարդկանց համար է, ովքեր մասնագիտական գործունեություն չեն ծավալում հանրակրթության ոլորտում, սակայն ցանկություն ունեն զբաղվելու ուսուցչությամբ: Եթե նրանք չեն ավարտել պահանջված մասնավարժական ոլորտին առնչվող դասընթացներ, որպեսզի որակավորվեն որպես հայկական հանրակրթական դպրոցի ուսուցիչ, ապա պետք է ավարտեն դրանք նախքան թեկնածուական շրջանը կամ դրա ընթացքում: Որակավորող քննության բարեհաջող հանձնման դեպքում այս թեկնածուները պետք է ավարտեն մեկ կիսամյակ տևող թեկնածուական փուլը, որի ընթացքում պետք է անցնեն դասավանդման պրակտիկա (սվազագույնը 6 շաբաթ՝ 240 ժամով): Սա հնարավորություն կտա նրանց հավաքելու դասավանդման թղթապանակ՝ որպես իրենց մասնագիտական թղթապանակի մի մաս: Այս ժամանակահատվածում նրանք մշտապես կհանդիպեն ԱԲ-ի ուսուցիչ-մենտորի հետ: Թեկնածուական շրջանն ավարտելուն պես նրանք իրավասու կլինեն ցուցակագրվելու ԱԲ-ի ուսուցչի հավաստագրման ծրագրի համար (որը պահանջում է, որ նրանք լինեն դպրոցի գործող ուսուցիչ):

ԱԲ-ի հավաստագիր ունեցողներին խրախուսելու և պարգևատրելու համար՝ հավաստագրմանը հաջորդող ակադեմիական տարվանից սկսած՝ հավաստագրված ուսուցիչների աշխատավարձի բարձրացում կլինի (երկու մակարդակով՝ ԱԲ-ի ավագ ուսուցչի և ԱԲ-ի ուսուցչի)՝ պայմանով, որ նրանք շարունակեն կատարել հավաստագրի պահանջները, ներառյալ մասնագիտական աճի ապահովումը, մենտորության առաջադրանքները, ԿԳԱԾ-ի համայնքային կյանքին ակտիվ մասնակցությունը և հարակից առաջադրանքները, որոնք նպատակ ունեն կատարելագործել Հայաստանի դպրոցների ուսումնական ծրագրերը և ուղեցույցները:

Ծրագրի հիմնական իրագործողների դերերը և պարտականությունները

ՀՀ կառավարություն

- ԱԲ-ի պաշտոնական ճանաչում:
- ԿԳԱԾ-ի շրջանակում մշակված հավաստագրման մեխանիզմների պաշտոնական ճանաչում:

- Ծրագրի իրագործման ֆինանսավորում. հիմնադրման և գործունեության ծախսեր և որակավորված ուսուցիչների աշխատավարձային ֆոնդերի հատկացում:
- Հանրակրթական դպրոցներում ԱԲ-ի կրթական ծրագրերի ներդրման և որակավորված ուսուցիչների արդյունավետ ներգրավման ապահովում:

«Այբ» կրթական հիմնադրամ

- Ծրագրի հայեցակարգի և ռազմավարության, ինչպես նաև իրագործման պլանի մշակում:
- Միջազգային գործընկերների հետ բանակցությունների վարում և նրանց ներգրավում:
- Հավաստագրման ծրագրի մշակում և հավաստագրման իրականացում:
- ԿԳԱԾ-ի գործունեության իրականացում նշանակված ծրագրի տնօրենի և կառավարող մարմինների միջոցով:

Գլխավոր միջազգային գործընկերներ

«Կրթության գերազանցության ազգային ծրագրի» հիմնասյուններից մեկը միջազգային գործընկերների հետ համագործակցությունն է: Միջազգային գործընկերների ներգրավումը և հետագա համագործակցությունը իրականացվելու է վճարովի հիմունքներով: Միջազգային գործընկերների հիմնական գործառույթները կլինեն.

- ԱԲ-ի համաքննում և մշտադիտարկում,
- ԿԳԱԾ-ի հավաստագրման ծրագրերի՝ համաշխարհային լավագույն չափորոշիչներին համապատասխանության հաստատում,
- հավաստագրման ծրագրերի ռազմավարական և գործառնական տարբեր հարցերի վերաբերյալ խորհրդատվության տրամադրում,
- ԿԳԱԾ-ի գործունեության մշտադիտարկում:

Ծրագրի գլխավոր միջազգային գործընկերներն են.

- Զեմբրիջի համալսարանը
- Լոնդոնի կրթության ինստիտուտը

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Փուլ I. 2014-2016 թթ.՝ հավաստագրում, հավատարմագրում, ծրագրի մշակում/փորձարկում:

ԿԳԱԾ-ը աշխատում է միջազգային գործընկերների հետ հետևյալ նպատակներով.

- ապահովել միջազգայնորեն մրցունակ ուսումնական ծրագրի մշակում, նյութեր, գնահատում, միջազգային ճանաչում և շարունակական կատարելագործում և որակի ապահովում,
- մշակել ուսուցիչների հավաստագրման երկու մակարդակ՝ ներառելով փորձարկում, վերապատրաստողների վերապատրաստում, գնահատում և որակի շարունակական ապահովում:

Փուլ II. 2016-2019 թթ.՝ իրագործում դպրոցի մակարդակում:

ԿԳԱԾ-ի ազգային իրագործումը նախատեսված է 2016 թվականի սեպտեմբեր ամսին: Երկրորդ փուլի ընթացքում կհավաստագրվի մոտ 500 ուսուցիչ, ինչը բավարար է 12 ավագ դպրոցում ԱԲ-ի ամբողջական ներդրման համար: «Այբ» կրթական հիմնադրամը, որպես այս պետական-մասնավոր գործընկերության գործընկեր, կաջակցի ուսուցիչներին և դպրոցներին իրենց նյութերի և հարմարությունների բարելավման գործում:

Փուլ III. 2019-2023 թթ.՝ ԱԲ-ի ներդրում բոլոր ավագ դպրոցներում:

Երրորդ փուլի ընթացքում կհավաստագրվի լրացուցիչ 1500 ուսուցիչ, ինչը հնարավորություն կտա ԱԲ-ը ներդնել բոլոր ավագ դպրոցներում՝ յուրաքանչյուրում առնվազն մեկական հոսքային դասարանով:

Առաջին փուլի ավարտին ծրագրի մասնակիցների քննարկման առարկա է դառնում Կրթության գերազանցության ազգային կենտրոնի (ԿԳԱԿ)՝ որպես առանձին կառույցի, հիմնադրման և երկրորդ փուլում գործարկման նպատակահարմարության հարցը (տե՛ս ամբողջական ծրագիր):

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՆԿԵՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցական կրթական համակարգի բարելավումը բարդ մարտահրավեր է, որի յուրաքանչյուր բաղադրիչ պահանջում է բազմաշերտ և համապարփակ մոտեցումներ: Թեև յուրաքանչյուր երկիր կարիք ունի այս մարտահրավերի հատուկ լուծումների, հաջողության գրավականներից մեկը լավագույն համաշխարհային փորձի վրա հիմնվելն է: Հարուստ ու լավագույն փորձ ունեցող համաշխարհային կրթական կառույցների հետ արդյունավետ համագործակցությունը կենսական նշանակություն ունի Հայաստանի համար բարեփոխումները լավագույնս նախաձեռնելու և իրականացնելու գործում: Միջազգային գործընկերոջ ներգրավումը և շարունակական համագործակցությունը թույլ կտան, որ ուսուցիչների գնահատման և մասնագիտական աճի բարեփոխումները շարունակեն մրցունակ լինել և համաշխարհային զարգացումներին համընթաց շարժվեն:

Գործընկերոջ ընտրության չափանիշներ

Կրթության գերազանցության ազգային ծրագրի մշակման ու իրականացման միջազգային գործընկերների ընտրության հարցում հաշվի են առնվել մի շարք չափանիշներ, այդ թվում՝

- կրթության ոլորտում (մասնավորապես՝ ուսուցիչների մասնագիտական զարգացման) միջազգային համբավը և առաջատար դիրքը,
- սեփական երկրում ուսուցիչների մասնագիտական զարգացման ասպարեզում լավագույն արդյունքների փորձը,
- կրթության համաշխարհային ոլորտում ներկայությունը և տարբեր երկրներում պետական մակարդակով ու հաջողությամբ իրականացված բարեփոխումները:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՆԿԵՐՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎԱԿԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐՈՒՄ

Ակնկալվում է, որ միջազգային գործընկերոջ գործունեությունը ԿԳԱԾ-ի և ԱԲ-ի ծրագրի շրջանակներում կներառի ծրագրի մշակման ու զարգացման գործում մասնակցություն և խորհրդատվություն:

ԿԳԱԾ-ի հիմնադրման փուլ

- 1 ԿԳԱԾ-ի համընդհանուր հայեցակարգային սկզբունքների համատեղ մշակում
- 2 Ուսումնական ծրագրերի բովանդակության համեմատական ուսումնասիրություն, միջազգային լավագույն փորձի հետ համեմատություն (հիմնական առարկաների գծով), առաջարկություններ՝ վերամշակված ուսումնական ծրագրերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ
- 3 ԱԲ-ի ավագ ուսուցիչների և ԱԲ-ի ուսուցիչների հայեցակարգի, նրանց դերերի և գործառույթների համատեղ մշակում

- 4 Գործող ուսուցիչների հետ ԱԲ-ի ավագ ուսուցիչների և ԱԲ-ի ուսուցիչների մակարդակներում վերապատրաստման ծրագրի համար ուսումնական ռեսուրսների, վերապատրաստման չափորոշիչների և գնահատման նպատակային արդյունավետ գործիքների մշակում
- 5 Վերապատրաստման ծրագրերի մշակում և վերապատրաստողների պատրաստման իրականացում:
- 6 ԿԳԱԾ-ին աջակցելու նպատակով դպրոցների ղեկավարների և կրթության համակարգի աշխատակիցների համար մասնագիտական զարգացման ծրագրի մշակում և իրականացում, այդ թվում ուսումնական նյութերի և ուղեցույցների տրամադրում

ԿԳԱԾ-ի գործառնական փուլեր

- 7 ԿԳԱԾ-ի ուսուցիչների հավաստագրման ծրագրի «վավերացում». ճշգրիտ անվանումը և ձևաչափը ենթակա են հետագա քննարկման և փոփոխամաձայնեցման:
- 8 ԿԳԱԾ-ի մշտադիտարկում որակի վերահսկման և պարբերական գնահատման միջոցով:

ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Կրթության գերազանցության ազգային ծրագիրը պետական մակարդակի նախաձեռնություն է, որը կոչված է իրականացնելու համակարգային բարեփոխումներ հանրակրթության ոլորտում: Ակնկալվում է, որ այն բեկումնային ազդեցություն կունենա Հայաստանի դպրոցական կրթության ողջ համակարգի վրա: Այն առանցքային դեր կունենա Հայաստանում մրցունակ մարդկային ռեսուրսի ձևավորման գործում:

Ազդեցության առաջնային ոլորտներ

- Ուսուցիչների մասնագիտական որակավորում
- Դասավանդման բովանդակություն և մեթոդաբանություն
- Համագործակցային մշակույթ

Ազդեցության երկրորդական ոլորտներ

- Դպրոցների կառավարում
- Կրթական ենթակառուցվածքներ

Առաջնային ազդեցություն

Կրթության գերազանցության ազգային ծրագրի առաջնային ազդեցությունը կլինի այն ոլորտներում, որտեղ ծրագիրն ուղղակիորեն կմիջամտի խոշոր նախաձեռնություններով:

Ուսուցիչների մասնագիտական կատարելագործում

ԿԳԱԾ-ը կբացահայտի հարուստ փորձառություն ու ներուժ ունեցող ուսուցիչների, կշահադրդի և կաջակցի նրանց մասնագիտական հետագա աճին: Արդյունքում Հայաստանի դպրոցական համակարգը հագեցած կլինի գերազանցության մշակույթի կրիչ մասնագետներով, ովքեր իրենց լավագույն փորձը կտարածեն գործընկերների շրջանում և կսովորեցնեն նրանց՝ նպաստելով ուսուցման որակի ընդհանուր բարելավմանը: Այս համատեքստում ակնկալվում է, որ ծրագիրը տասը տարիների ընթացքում կարող է դրական ազդեցություն ունենալ դպրոցական համակարգում աշխատող շուրջ 20,000 ուսուցիչների վրա:

Օժանդակող մեխանիզմները

Ուսուցիչների զարգացմանը նպաստող տեղական կարողությունների հզորացում:

Կրթության գերազանցության ազգային ծրագրի պահանջներին համապատասխանող ուսուցիչները կընդգրկվեն լայնածավալ վերապատրաստման դասընթացներում, որոնց հիմքում դրված է դասավանդման հմտությունների և առարկայական բովանդակության համաշխարհային լավագույն փորձը: Ակնկալվում է, որ տասը տարվա ընթացքում ծրագրի շրջանակում կհավաստագրվի շուրջ 2,000 ուսուցիչ:

Լավագույն փորձի տարածում: Ծրագիրը կիրականացվի այնպիսի մոտեցումներով, որոնք թույլ կտան համաչափորեն ընդգրկել դպրոցական ողջ համակարգը՝ ելնելով առարկայական և աշխարհագրական բաշխման սկզբունքներից: Ուսուցման և գիտելիքի փոխանցման հատուկ մեխանիզմների օգնությամբ այդ փորձը կտարածվի դպրոցական ողջ համակարգում աշխատող մյուս ուսուցիչների շրջանում ևս: Այդ նպատակով

ծրագրի ուսուցիչներին կհանձնարարվի իրենց գիտելիքներն ու փորձը մենտորության, աշխատանքային սեմինարների և այլ եղանակներով փոխանցել մյուս գործընկեր ուսուցիչներին: ԿԳԱԾ-ը պարբերաբար կնախաձեռնի միջոցառումներ, որոնք ուղղված կլինեն ուսուցիչների մասնագիտական աճին՝ ԿԳԱԾ-ի շրջանակներից դուրս: Մասնավորապես, կկազմակերպվեն վերապատրաստման սեմինարներ, կիրառարակվեն ուսուցչի մասնագիտական հմտությունների խթանմանն ուղղված մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ և կրթական այլ ռեսուրսներ: Հաշվի առնելով, որ ԿԳԱԾ-ով հավաստագրված յուրաքանչյուր ուսուցիչ կարող է իր գիտելիքներն ու հմտությունները տարածել առնվազն 10 այլ ուսուցչի շրջանում, ապա ծրագիրը մեկ տասնամյակի ընթացքում կնպաստի հայկական դպրոցական համակարգի ուսուցիչների շուրջ 50%-ի մասնագիտական աճին:

Մասնագիտական առաջխաղացման հնարավորություններ: ԿԳԱԾ-ի շրջանակում ստացված որակավորումը, մասնագիտական համապատասխան աճի և մրցունակ աշխատավարձի հետ միասին, կշահադրդի ուսուցիչներին՝ ձգտելու մասնագիտական առաջընթացի և մատուցելու որակյալ ուսուցում:

Շնորհալի անհատների ներգրավում: Մասնագիտական զարգացման հարթակները և պատշաճ աշխատավարձը կնպաստեն ուսուցիչների բարեկեցության և հեղինակության աճին: Սա դրականորեն կփոխի հասարակության վերաբերմունքը ուսուցչի մասնագիտության նկատմամբ՝ գրավելով շնորհալի մարդկանց և լավագույն մարդկային ռեսուրսներն ուղղորդելով դպրոց:

Դասավանդման առաջնակարգ բովանդակություն և մեթոդաբանություն

ԿԳԱԾ-ը հասանելի և արդյունավետորեն կիրառելի կդարձնի դպրոցական առարկաների դասավանդման ժամանակակից լավագույն բովանդակությունն ու մեթոդաբանությունը: Համաշխարհային գիտելիքների օրինակելի պաշարը հասանելի կդառնա դպրոցական ողջ համակարգի համար:

Իրականացման մեխանիզմները

Համաշխարհային գիտելիքի լավագույն պաշարների հավաքագրում: ԿԳԱԾ-ը շարունակաբար համաշխարհային նշանակության բազմաթիվ աղբյուրներից կհավաքագրի առարկաների բովանդակությանն ու մեթոդաբանությանն առնչվող ժամանակակից լավագույն գիտելիքները: Հավաստագրված ուսուցիչները և ԿԳԱԾ-ի փորձագետները կլինեն այս գիտելիքների հիմնական յուրացնողները, տեղայնացնողներն ու տարածողները:

Գիտելիքի տեղայնացում: Հավաքագրված բազմաշերտ գիտելիքները կտեղայնացվեն՝ հայաստանյան դպրոցական համակարգին լավագույնս համապատասխանեցվելու նպատակով:

Արդյունավետ տարածում: Բովանդակային և մեթոդաբանական լավագույն փորձը կլինի բաց և առցանց հասանելի: ԿԳԱԾ-ի շրջանակում շահառուների ներգրավվածության և դիմումների բարձր մակարդակն ապահովելու համար կկիրառվեն գիտելիքի տարածման արդյունավետ միջոցներ՝ ապահովելով աշխարհագրական համաչափ բաշխվածությունը:

Համագործակցային մշակույթի խթանում

Կրթության գերազանցության ազգային ծրագրի տարբերակիչ նորարարությունը շահառուների միջև համագործակցային մշակույթի և բազմաշերտ գործակցության ձևավորումն է: Հատուկ այդ նպատակով ստեղծված փոխշփման միջոցների օգտագործումը, փորձի փոխանակումը և համատեղ նախաձեռնությունները կնպաստեն դպրոցական կրթության համակարգում համագործակցային մշակույթի կայացմանը:

իրականացման մեխանիզմները

Փոխշփման միջոցներ: ԿԳԱԾ-ի առանցքային գործառնություններից կլինի պաշտոնական և ոչ պաշտոնական շփման ուղիների, միջոցների ձևավորումն ու խթանումը, ինչը կնպաստի ծրագրի շրջանակում համագործակցության ընդլայնմանը:

Համագործակցային նախագծեր: Ակնկալվում է ծրագրի շրջանակում իրականացնել բազմակողմանի նախագծեր, որոնք կներգրավեն ուսուցիչներ, դպրոցներ, այլ ուսումնական հաստատություններ ու շահագրգիռ կողմեր: Համագործակցային նման նախաձեռնությունների խթանումը և դրանց իրականացմանն աջակցումը կարևոր ձեռքբերում կլինեն ծրագրի հաջող իրագործման համար:

Երկրորդային ազդեցություն

Կրթության գերազանցության ազգային ծրագրի երկրորդային ազդեցությունը և Կրթության գերազանցության ազգային կենտրոնի գործառնությունները կներառեն մի շարք ոլորտներ, որոնց վրա ծրագիրը կունենա իր հիմնական գործունեության շրջանակից դուրս անուղղակի կամ մասնակի ազդեցություն:

իրականացման մեխանիզմները

Որակյալ ուսուցիչների ներդրումը դպրոցական գործընթացներում: Սպասվում է, որ ԿԳԱԾ-ի ազդեցության ներքո գործող ուսուցիչներն իրենց դպրոցներում փոփոխություններ կկատարեն՝ ներմուծելով դասավանդման մեթոդաբանության, հաղորդակցության, աշխատակիցների հետ համագործակցության նոր մշակույթ և դպրոցական կատարելագործված գործընթացներ: Նման ներգրավումը հնարավորություն կտա բարելավելու դպրոցների ընդհանուր կառավարումը:

Դպրոցների տնօրենների հմտությունների արդիականացում: Սպասվում է, որ հետագայում ԿԳԱԾ-ը մասնագիտական անհն ուղղված միջոցառումների օգնությամբ կնպաստեն դպրոցների տնօրենների հմտությունների զարգացմանն ու արդիականացմանը: Սա կնորացնի տնօրենների կազմակերպչական և կառավարման հմտությունները՝ դրականորեն ներգործելով տվյալ դպրոցի աշխատակիցների և դպրոցի ընդհանուր գործունեության վրա:

Դպրոցների ղեկավարների նոր սերնդի ձևավորում: Դպրոցների տնօրենների կարողությունների և հմտությունների ընդլայնմանը զուգահեռ՝ ծրագիրը առաջ կբերի համակարգի ներսում ապագա առաջնորդների ձևավորման խնդիրը: Խոսքն այն մարդկանց մասին է, ովքեր կստանան հմտությունների կառավարումը և կօգտագործեն միջազգային լավագույն փորձին համապատասխանող արդյունավետ մոտեցումներ: Բացի դրանից, դպրոցի կառավարման մեջ մարդկային որակյալ ռեսուրս կարելի է ներգրավել դպրոցի համակարգից դուրս գտնվող անհատների շարքից, ովքեր իրենց

հետ կբերեն նորարարական և արդյունավետ մոտեցումներ:

Դպրոցական և դասավանդման ենթակառուցվածքի արդիականացում

Ծրագրով կստեղծեն հարթակներ և կծեռնարկվեն միջոցներ, որոնց նպատակը կլինի դպրոցներում ուսումնական մրցունակ միջավայրի և ընդհանուր ֆիզիկական ու տեխնոլոգիական ենթակառուցվածքների ապահովումը: Սա կարևոր դերակատարում կունենա բարձրորակ ուսուցման ապահովման, ինչպես նաև ծրագրի շրջանակում ձեռք բերված գիտելիքների ու հմտությունների արդյունավետ կիրառման մեջ:

Ազդեցության չափումը

Կրթության գերազանցության ազգային ծրագրի ազդեցությունը կարելի է չափել մի շարք հիմնական քանակական ցուցանիշների միջոցով:

- Հայաստանի ԲՈՒՀ-երի մանկավարժական ծրագրերի դիմորդների հոսքի ավելացում և ընդունելության անցողիկ միջին միավորի բարձրացում
- Դպրոցներից ուսուցիչների ցածր արտահոսք դեպի աշխատանքի այլ ոլորտներ
- ԱԲ որակավորման քննություններ հաջողությամբ հանձնող ուսուցիչների թվի ավելացում
- Հանրապետության մակարդակով աշակերտների առաջադիմության բարձրացում. դպրոցական քննությունների, հանրապետական առարկայական օլիմպիադաների արդյունքներ և այլն
- Միջազգային օլիմպիադաներում և գնահատման այլ համակարգերում (օրինակ՝ PISA, TIMSS և այլն) Հայաստանը ներկայացնող աշակերտների արդյունքների բարելավում

Նման ցուցանիշների կայուն աճը օբյեկտիվորեն կվկայի Կրթության գերազանցության ազգային ծրագրի արդյունավետության մասին՝ իր նպատակին ծառայելու և դրական լայն ազդեցություն ունենալու տեսանկյունից:

Ծրագիրը խթանող այլ նախաձեռնություններ

ԿԳԱԾ-ի արդյունավետությունն ու ընդհանուր ազդեցությունը կախված կլինեն մի շարք այլ գործոններից, որոնք ևս պետք է դիտարկվեն համապատասխան նախաձեռնությունների համատեքստում:

Մանկավարժական բարձրագույն կրթության որակի բարելավում: Ուսուցիչների մասնագիտական աճին միտված անգամ լավագույն միջոցառումները կարող են լինել անարդյունավետ կամ չունենալ անհրաժեշտ ընդգրկումը, եթե մանկավարժության ոլորտում չկա արդյունավետ, նորարարական բարձրագույն կրթություն: Առանց դրա լավագույն ուսանողները դժվար թե ընտրեն ուսուցչի մասնագիտությունը՝ դրանով իսկ նվազեցնելով մոտիվացված ու շնորհալի թեկնածուների մուտքը դպրոց:

Դպրոցներում ընդհանուր ֆիզիկական և ուսումնական ենթակառուցվածքների արդիականացում: Թեև ակնկալվում է, որ ծրագիրը որոշակի դրական ազդեցություն կունենա դպրոցներում պահանջվող ուսումնական ենթակառուցվածքների վրա, այնուամենայնիվ կա շարունակական լայնածավալ միջամտության կարիք՝ դպրոցների

ուսումնական և տեխնոլոգիական հնարավորություններն ընդլայնելու նպատակով:
ԿԳԱԾ-ի հաջող իրականացման համար դպրոցների ենթակառուցվածքների
արդիականացման պահանջվող ծախսերը սահմանափակող գործոն են նման
նախաձեռնությունների լիարժեք իրականացման համար:

Մանկավարժության ոլորտում աշխատավարձի շարունակական աճի ապահովում:
ԿԳԱԾ-ով հավաստագրված ուսուցիչների աշխատավարձի աճի սկզբունքը պետք է
տարածել նաև հանրակրթության ողջ ոլորտի ուսուցիչների վրա: Սա կնպաստի
մանկավարժի մասնագիտությունն ընտրելու մոտիվացիայի բարձրացմանը և շնորհալի
մարդկանց հոսքը կուղղորդի դպրոց: Այս համատեքստում կարևոր է, որ ուսուցչի
աշխատավարձը համապատասխանի բարձրակարգ մասնագիտությունների համար
սահմանված միջին աշխատավարձին և համաքայլ լինի երկրի տնտեսությանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ դպրոցական համակարգի բարելավումը բարդ խնդիր է, որը բազմակողմանի միջամտության կարիք ունի: Ակնկալվում է, որ ուսուցիչների գնահատման և մասնագիտական աճի ընդլայնվող հնարավորությունները, մրցունակ աշխատավարձի և ուսուցչի կարգավիճակի բարձրացման հետ համատեղ, դրական ազդեցություն կունենան հանրակրթության մյուս բաղադրիչների վրա և կարևոր գործոն կդառնան Հայաստանի կրթական համակարգի բարելավման համար: Քանի դեռ չկա ուսուցիչների որակավորման և մասնագիտական զարգացման միասնական, բոլոր երկրների կողմից ընդունված մոդել, ԿԳԱԾ-ը պետք է հիմնվի եղած տարբեր մոդելներից լավագույնի վրա՝ այն արդյունավետորեն տեղայնացնելով և լավագույնս համապատասխանեցնելով Հայաստանի դպրոցական համակարգում առկա կարիքներին:

ԿԳԱԾ-ի արդյունավետության և կայունության աստիճանը կախված կլինի մի քանի գործոնից՝ սկսած ծրագրում ռեսուրսների ներդրումից մինչև դպրոցական կրթության համակարգում առկա այլ խնդիրների դիտարկում: Ծրագրի բերած բարեփոխումները կհանգեցնեն դպրոցական կրթության մշակույթի բարելավմանը՝ համադրելով համաշխարհային լավագույն փորձն ու կրթության շուրջ համախմբելով Հայաստանի ազգային ներուժը: